ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի պետական հատվածի արդիականացում 2» ծրագրի շրջանակում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պատվիրակության կողմից Համաշխարհային բանկի վաշինգտոնյան գրասենյակ և Արգենտինայի Հանրապետության հակակոռուպցիոն գրասենյակ կատարած այցերի

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պատվիրակությունը 2015 թվականի ապրիլի 29-ից մայիսի 8-ը Համաշխարհային բանկի «Պետական հատվածի արդիականացում 2» ծրագրի շրջանակում այցելել է Համաշխարհային բանկի վաշինգտոնյան գրասենյակ և Արգենտինայի Հանրապետության հակակոռուպցիոն գրասենյակ: Այցի նպատակն էր ծանոթանալ ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծության էլեկտրոնային գործող համակարգերին:

2015 թվականի ապրիլի 29-ից մայիսի 1-ը Հանձնաժողովը մասնակցել է Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Շահերի բախման, գույքի և եկամուտների հայտարարագրերի կարգավորումները Հայաստանի հանրային ծառայության ոլորտում» թեմայով սեմինարին:

Համաշխարհային բանկում Հանձնաժողովի անդամներին ընդունել է Հայաստանի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Կիպրոսի, Վրաստանի, Իսրայելի, Մակեդոնիայի, Մոլդովայի, Մոնտենեգրոյի, Նիդերլանդների, Ռումինիայի և Ուկրաինայի տարածաշրջանի հարցերով գործադիր տնօրեն Ֆրանկ Հիմսկերկը, ով հանդիպման ընթացքում ներկայացրել է Համաշխարհային բանկի գործունեությունը տարածաշրջանում, մասնավորապես՝ համագործակցության ուղիները Հայաստանի հետ՝ կարևորելով արդար

կառավարման, պետական հատվածի արդիականացման ուղղությամբ տարվող աշխատանքները և դրանց շարունակական լինելու անհրաժեշտությունը:

Այցի շրջանակում հանդիպում է տեղի ունեցել Համաշխարհային բանկի կենտրոնական գրասենյակի ֆինանսական բաժնի մասնագետներ Իվանա Ռոսսիի և Լորա Պոպի հետ, որոնց հետ քննարկվել են հարտարարագրման էլեկտրոնային համակարգին, շահերի բախմանը, ապօրինի հարցստացմանն առնչվող հարցեր, ինչպես նաև ներկայացվել է գույքի և եկամուտների հայտարարագրերում պաշտոնյաների կողմից տվյալներ թաքցնելու կամ կեղծ տվյալ ներկայացնելու դեպքերում իրավակարգավորումների և այդ համատեքստում պատասխանատվության միջոցների վերաբերյալ միջազգային փորձը: Սեմինարի շրջանակներում ոլորտի մասնագիտացում և զգալի փորձ ունեցող միջազգային փորձագետներին ներկայացվել են հայտարարագրման համակարգի հայաստանյան խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, հանձնաժողովի ձեռքբերումներն ու մարտահրավերները, ինչպես նաև հանրային էթիկայի ընդհանուր համակարգի զարգացման ընթացիկ նախաձեռնություններն ու հեռանկարները:

Համաշխարհային բանկի փորձագետներն իրենց հերթին ներկայացրել են էլեկտրոնային հայտարարագրման համակարգի լավագույն միջազգային փորձ ունեցող երկրների ցանկը և ընդգծել Հայաստանում հայտարարագրերի վերլուծության էլեկտրոնային համակարգ ներդնելու կարևորությունը:

Արգենտինայի Հանրապետություն կատարած ուսումնաճանաչողական այցի շրջանակներում Հանձնաժողովի պատվիրակությունը ընդունելության է արժանացել Արգենտինայի Հանրապետության արդարադատության և մարդու իրավունքների նախարարության հակակոռուպցիոն գրասենյակի կողմից, որտեղ հանդիպումներ են տեղի ունեցել ըստ նախապես համաձայնեցված ծրագրի և ժամանակացույցի:

Հակակոռուպցիոն գրասենյակի հետ հանդիպման ընթացքում ներկայացվել է Արգենտինայի գործադիր իշխանության ոլորտի պաշտոնյաների գույքի և

եկամուտների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը՝ OAnet ծրագրի հին և գործող տարբերակները:

Հանձնաժողովի պատվիրակությունն հյուրընկալվել է նաև Արգենտինայի Եկամուտների դաշնային վարչակազմում (AFIP)՝ ծանոթանալով այդ մարմնի գործունեությանը ու դրա առանձին ստորաբաժանումների գործառույթներին, եկամուտների և պաշտոնյաների հայտարարագրման միավորված էլեկտրոնային համակարգերին:

Հանձնաժողովի պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաև Հակակոռուպցիոն գրասենյակի թափանցիկության և հետաքննության բաժինների փորձագետների հետ, որոնք ներկայացրել են շահերի բախման, անհամատեղելիության, ինչպես նաև ապօրինի հարստացման դեպքերի բացահայտման ուղղությամբ իրականացված հետաքննության գործընթացի առանձնահատկությունները:

Արգենտինայի գործընկերների հետ քննարկվել են նաև կոռուպցիայի կանխարգելման գործիքներին ու դրանց կիրառության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ոլորտում առկա մարտահրավերներին հաջողությամբ դիմակայելուն վերաբերող հարցեր: